ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

ՀՀ ՏԿԵՆ կարիքների համար կազմակերպված «ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2025/22Փ» ծածկագրով գնման ընթացակարգի* գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ

մեկնարկ՝ 25.07.2025թ.
ժամը 15:00
ավարտ՝ 15.08.2025թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության փորձագետ (հանձնաժողովի նախագահ՝ ԳՊ/ԳԱՊ)	Նորիկ Մնոյան

Հանձնաժողովի անդամներ՝

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի ավագ ինժեներ (համաձայնությամբ՝ հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ)	Հրանտ Մինասյան
«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի ավագ ինժեներ (համաձայնությամբ՝ հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ)	Գևորգ Խեչումյան
«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի պայմանագրերի կառավարման մասնագետ (համաձայնությամբ՝ հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԲԱ)	Մանե Մալխասյան
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության օրենսդրության բաժնի գլխավոր իրավախորհրդատու (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԲԱ)	Լաուրա Գևորգյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գնումների համակարգման և կազմատնտեսական վարչության գնումների համակարգման բաժնի պետ (հանձնաժողովի քարտուղար՝ ԳՊ/ՄՀՄ)	Զանուշ Հայրապետյան

«ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2025/22Փ» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) հայտերի բացման և գնահատման նիստի օրակարգը

1. Տեղեկություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ծառայությունների գնի վերաբերյալ:
2. Տեղեկություն՝ Armeps (armeps.am) էլեկտրոնային համակարգում հայտ ներկայացրած մասնակցի վերաբերյալ:
3. Տվյալներ՝ Ընթացակարգին էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակցի առաջարկած գնի մասին:
4. Տվյալներ՝ Ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ Ընթացակարգի հրավերով (այսուհետ՝ Հրավեր) սահմանված վավերապայմաններին համապատասխան լինելու մասին:
5. Տեղեկատվություն՝ Ընթացակարգի հրավերով սահմանված ծառայությունների բնութագրերի վերաբերյալ հիմնավորումների, հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին:
6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման արդյունքների հաստատման (մրցույթի արդյունքների ամփոփման) մասին:

* Սույն գնումն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի, 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի հիման վրա:

1. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ծառայությունների գնի վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գնման գինը.

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի գնման գինը	Չափաբաժնի անվանումը
1	105 000	**Մ-3, ՀՀ սահման(Մարգարա) - Վանաձոր – Տաշիր – ՀՀ սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի 97-րդ կմ-ի հողային պաստառի փլուզված հատվածի վերականգնման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություններ**

2. Տեղեկություն՝ Armeps (armeps.am) էլեկտրոնային համակարգում հայտ ներկայացրած մասնակցի վերաբերյալ

2.1 Ընթացակարգի հայտը էլեկտրոնային armeps.am համակարգի միջոցով բացվել է սահմանված ժամկետում՝ **2025 թվականի հուլիսի 25-ին, ժամը՝ 15:00-ին**:

2.2 Սահմանված կարգով ներկայացվել է 1 հայտ, որն ընդունվել է Armeps (armeps.am) էլեկտրոնային համակարգի կողմից և համարվել հետագա գնահատման համար ընդունելի:

2.3 Ընթացակարգի շրջանակներում հայտ ներկայացրած մասնակցի տվյալները՝ անվանումը, գտնվելու կամ բնակության վայրը, կապի միջոցները՝

№	Մասնակցի անվանումը	Գործունեության հասցեն	ՀՎՀՀ	Էլեկտրոնային հասցե, հեռախոսահամար
1	«ԳԵՐԱ» ՍՊԸ	ՀՀ ք. Երևան, Աբովյան պ./շ..17/բն.21	02925161	vtersimonyan@gmail.com Հեռ. +374 91 214 705 +374 55 566 119

3. Տվյալներ՝ Ընթացակարգին էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակցի առաջարկած գնի մասին

3.1 Ընթացակարգի շրջանակներում մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկը

Չափաբաժին 1: Մ-3, ՀՀ սահման(Մարգարա) - Վանաձոր – Տաշիր – ՀՀ սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի 97-րդ կմ-ի հողային պաստառի փլուզված հատվածի վերականգնման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություններ

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	2	3	4	5
1	**«ԳԵՐԱ» ՍՊԸ**	**31 500**	**0**	**31 500**

3.2 Մասնակցի գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում են /ճիշտ են/:

4. Տվյալներ՝ Ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ Հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան լինելու մասին:

4.1 Մասնակցի էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

4.2 Մասնակցի էլեկտրոնային հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են Ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին):

5. Տեղեկատվություն՝ Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումների, հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

5.1 Օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել:

5.2 Սույն ընթացակարգի վերաբերյալ հիմնավորումներ չեն տրվել:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման արդյունքների հաստատման (մրցույթի արդյունքների ամփոփման) մասին:

Գնահատող հանձնաժողովը որոշեց.

6.1 Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով և հիմք ընդունելով հայտերի գնահատման արդյունքները Ընթացակարգի 1-ին չափաբաժնի ընտրված մասնակից ճանաչել՝ **«ԳԵՐԱ» ՍՊԸ-ին:**

6.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետը՝ անգործության ժամկետ չսահմանել:

6.3 Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

6.4 Ընթացակարգի ընտրված մասնակցին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ՝ հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

Հանձնաժողովի անդամների ստորագրությունները՝

Հանձնաժողովի նախագահ՝	**Նորիկ Մնոյան**	.....
Հանձնաժողովի անդամներ՝	**Հրանտ Մինասյան**	.....
	Գևորգ Խեչումյան	.....
	Մանե Մալխասյան	.....
	Լաուրա Գևորգյան	.....
Քարտուղար՝	**Զանուշ Հայրապետյան**	.....